ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԲՈՐԻՍ ԲԱԽՇԻՅԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Մարինե Ֆարմանյանի, Լիլիթ Ղազանչյանի և Մանե Կարապետյանի,

քննարկելով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախշիյանի լիազորությունները կասեցնելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

2022 թվականի փետրվարի 1-ին Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացրել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախշիյանի լիազորությունները կասեցնելու մասին[1]:

Որոշման հիմքում դրվել է Գլխավոր դատախազ Ա. Դավթյանի կողմից 31.01.2022թ. ներկայացված «ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Հրանտի Բախշիյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու վերաբերյալ» և «ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Հրանտի Բախշիյանին ազատությունից զրկելու համաձայնություն տալու վերաբերյալ» թիվ 1/9-2-2022 և 1/9-3-2022 միջնորդությունները բավարարելու մասին Բարձրագույն դատական խորհրդի 31.01.2022թ. թիվ ԲԴԽ-11-Ո-Ք-1 և 01.02.2022թ. ԲԴԽ-11-Ո-Ք-2 որոշումները:

ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի վարչության կողմից դեպքի կապակցությամբ տրված պարզաբանման համաձայն՝ *Դատավոր Բորիս*

[1] https://court.am/hy/decisions-single/1168

02 փետրվարի 2022թ.
թիվ 2/1-Լ

Բախշիյանը ակնհայտորեն առանց հիմքերի, առանց ամբաստանյալի լսվելու իրավունքն ապահովելու կայացրել է կալանավորման որոշում[2]:

Ինչ վերաբրում է դատախազության կողմից այն չբողոքարկելուն, ապա ըստ նույն պարզաբանման՝ *Դատավոր Բախշիյանի կողմից կայացված ակնհայտ ապօրինի որոշումը դատախազությունը չի բողոքարկել, քանի որ այն արդեն իսկ ամբաստանյալի պաշտպանի կողմից եղել է բողոքարկված, ինչը բավարար հիմք էր դրա օրինականությունն ու հիմնավորվածությունը վերաքննիչ դատարանում ստուգելու համար: Այնտեղ դատախազը պնդելու էր առաջին ատյանի դատարանում արտահայտված դիրքորոշումն այն մասին, որ ամբաստանյալի կալանավորումն ակնհայտ ապօրինի է:*

* * *

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:*

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:*

ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:*

Վերոնշյալ սահմանադրական երաշխիքների հիման վրա «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածը որպես դատարանների անկախության երաշխիք սահմանում է՝

1. ***Արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է*** *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ:*

2. ***Դատարանը գործը կամ հարցը (այսուհետ՝ գործ) քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ****:*

Դատարանների անկախության երաշխիքներն ամրագրված են նաև միջազգային իրավական ակտերում:

ՄԱԿ-ի 06.09.1985թ.՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ»-ի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝

- դատական մարմինների անկախությունը երաշխավորվում է պետության

---

[2] https://www.prosecutor.am/am/mn/8443/

կողմից և հաստատվում է Սահմանադրությունում կամ երկրի օրենքներում: Բոլոր պետական և այլ հիմնարկները պարտավոր են հարգել և պահպանել դատական մարմինների անկախությունը.

- յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է համապատասխան պայմաններ ստեղծել՝ դատական մարմիններին հնարավորություն տալով իրենց պարտականությունները կատարել պատշաճ կերպով:

Վենետիկյան հանձնաժողովի կողմից հաստատված մոտեցման համաձայն՝ դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությունը վերաբերում է երկրի ներսում իշխանությունների բաժանման, օրենսդիր և գործադիր մարմինների հնարավոր ճնշումներից դատարանների պաշտպանության հնարավորություններին և ազատ գործելուն: Անհատական անկախությունը վերաբերում է դատավորի կողմից գործերի քննությանն ու որոշումների կայացման ժամանակ հնարավոր ճնշումների բացակայությանը[3]:

ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում՝ *արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *Դատարանի լիազորություններն են,* ***մասնավորապես՝ որոշումներ կայացնել կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման****, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին, օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները:*

Նույն օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ ***որպես խափանման միջոց կալանքն ընտրելու*** *կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու* ***օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:***

* * *

Վերը շարադրվածի արդյունքում կարելի է արձանագրել հետևյալը.

- Արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է:
- Դատարանը գործը կամ հարցը (այսուհետ՝ գործ) քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ:

---

[3] European Commission for Democracy through Law, Compilation of Venice Commission opinions, reports and studies on constitutional justice, 1 July 2015

- Դատարանը օրենքով լիազորված է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումներ կայացնել:
- Խափանման միջոց ընտրված կալանքի օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից:

Հաշվի առնելով այն, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Բորիս Բախշիյանի կողմից կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման լիազորություն օրենքով վերապահված է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին, ուստի հիշյալ դատական ակտն ակնհայտ ապօրինի լինելու մասին բոլոր դատողությունները սուբյեկտիվ են, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատախազությունն այն չի բողոքարկել: Թեև դատախազության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ դատախազը առաջին ատյանի դատարանում արտահայտել է դիրքորոշում առ այն, որ ամբաստանյալի կալանավորումն ակնհայտ ապօրինի է, սակայն այդպիսի որոշումը չբողոքարկելը, կամ այլ կերպ ասած անգործությունը կարող է վկայել նման որոշման հետ համաձայնության մասին:

Դատախազության փաստարկն առ այն, որ ամբաստանյալի փաստաբանն արդեն իսկ բողոքարկել էր որոշումը, որևէ կերպ չի արդարացնում դատախազի անգործությունը, քանի որ դատախազը չի կարող իր գործունեությունն իրականացնել կամ քայլերը պայմանավորել դատավարական հակառակ կողմում գտնվողի՝ փաստաբանի, պաշտպանական քայլերից ելնելով, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատախազը՝ պաշտպանի կողմից ներկայացված բողոքի մասին կարող էր տեղեկացվել հիմնականում դատական ակտի բողոքարկման ժամկետները սպառվելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի **գնահատմամբ խիստ մտահոգիչ են** դատախազության կողմից չբողոքարկված ակտի ոչ օրինական լինելու հիմքով դատավորի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համաձայնություն տալու, նրան ազատությունից զրկելու և լիազորությունները կասեցնելու Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, որոնք կարելի է դիտարկել ոչ միայն որպես ուղղակի միջամտություն, այլ նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորի անկախության ոտնահարում:

Ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 2.2. կետի պահանջները,

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Կոչով դիմել՝

- ***պետական մարմիններին և բարձրաստիճան պաշտոնատար անձանց*** *զերծ մնալ դատական իշխանության անկախությունը և հեղինակությունը կասկածի տակ դնող որևէ գործողություններից,*

- ***դատական իշխանության ներկայացուցիչներին*** *գործել բացառապես ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:*

- ***ՀՀ բարձրագույն դատական խորհրդին՝*** *ՀՀ Սահմանադրությամբ և «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով ապահովել դատարանների և դատավորների անկախությունը:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

02 փետրվարի 2022թ.
թիվ 2/1-Լ
ք. Երևան